Վահե Վազգենի Գաբրիելյան
Հայաստանի դիվանագիտական դպրոցի տնօրեն
Արտակարգ և լիազոր դեսպան, բ.գ.թ., դոցենտ

Վահե Գաբրիելյանը ոսկե մեդալով ավարտել է Երևանի N 139՝ անգլիական թեքումով միջնակարգ դպրոցը և գերազանցությամբ՝ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների բաժանմունքը (հետագայում նույն անվամբ, այժմ՝ Եվրոպական լեզուների ֆակուլտետ) անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ: Խորհրդային բանակում ծառայելուց հետո ուսումը շարունակել է նույն ֆակուլտետում, եղել է Պարույր Սևակի անվան կրթաթոշակառու: Ուսանել է նաև ԱՄՆ Հյուսիսային Կարոլինա նահանգի Դեյվիդսոն քոլեջում և Վիեննայի դիվանագիտական ակադեմիայում: Ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան:

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում դասավանդել է անգլերեն, ապա Միացյալ Թագավորության և ԱՄՆ երկրագիտություն, հետագայում ՄԹ երկրագիտություն է դասավանդել նաև ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում պաշտպանել է թեկնածուական թեզ լեզվաբանության տեսությունից 1994թ.:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունում աշխատել է 1994 թվականից՝ Միջազգային կազմակերպությունների վարչության ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների, ապա ՅՈՒՆԵՍԿՕ-ի բաժիններում՝ որպես երրորդ, երկրորդ, առաջին քարտուղար, կատարել է ՄԱԿ-ի բաժնի վարիչի պարտականությունները:

Եղել է ՀՀ առաջին և երկրորդ նախագահների և ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի թարգմանիչը:

1998-2003թթ. եղել է ՀՀ նախագահի մամուլի քարտուղարը:

2003-2010թթ. եղել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը, 2005-2012թթ՝. համատեղության կարգով նաև Իռլանդիայում ՀՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպանը:

Եղել է շուրջ հարյուր կառավարական պատվիրակությունների անդամ:

2010թ. նշանակվել է Հայաստանի նորաստեղծ դիվանագիտական դպրոցի տնօրենն:

Որպես թարգմանիչ կատարել է բազմաթիվ համաժամանակյա և հաջորդական թարգմանություններ: Եղել է Անգլիայի Արտոնագրված լեզվաբանների ինստիտուտի անդամ:

Լուսանկարների *«Բրիտանիա»* (Երևան 2009թ. Ստեփանակերտ 2010թ. և Գյումրի 2012 թվականից մինչ օրս), *«Արցախ»* (Երևան 2011թ. և Ստեփանակերտ 2012թ.) *«Հայկական ժառանգությունը և ՅՈՒՆԵՍԿՕ-ն»* (Աթենք 2023թ.) անհատական ցուցահանդեսների հեղինակն է: *«Վտանգված ժառանգություն. Արցախ»* (Երևան 2021թ., Բրյուսել 2022թ., Վարշավա 2024թ.) ցուցահանդեսի համակարգողն է և հիմնական հեղինակը:

«Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչները» (despan.am) և «Իրական Արցախ» (realkarabakh.com) հանրագիտարանային կայքերի հեղինակն է:

Հեղինակն է “Artsakh: The People and Land of Karabakh” (2011թ., անգլ.) and “Armenian Heritage and UNESCO” (2017թ., անգլերեն և 2018թ. “Le Patrimoine Arménien et I’UNESCO” ֆրանսերեն) գրքերի, ունի տպագրված գիտական աշխատություններ և թարգմանություններ: